



Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց «Նոր զարգացող միտումները քիմիայում-2025» (NewTrendsChem-2025) միջազգային գիտաժողովը: Այն միավորեց անվանի քիմիկոսների, երիտասարդ գիտնականների աշխարհի տարբեր երկրներից՝ ներկայացնելու հետազոտությունների արդյունքներ, անցկացնելու բնագավառներ և փոխանակվելու փորձով, ստեղծելու նոր համագործակցություններ:

Ողջունելով մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ասաց. «Այսօր նման համաժողովներն առավել քան երբևէ պահանջված են՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական իրավիճակը և այն ընթացիկ ու սպասվող մարտահրավերները, որոնց դիմակայելու համար մարդկությունը պետք է պատրաստ լինի: Պատմությունը ցույց է տվել, որ նման ժամանակներում գիտությունը, կրթությունը ու մշակույթը միշտ վճռորոշ դեր են խաղացել ժողովուրդների միավորման գործում: Բարձր տեխնոլոգիական գիտական հետազոտությունները կենսական անհրաժեշտություն են: Այս համատեքստում գիտնականների միջև հաղորդակցությունը, համագործակցությունը և միջազգային գիտաժողովները չափազանց կարևոր են»:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գի-

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Նոր զարգացող միտումները քիմիայում-2025» միջազգային գիտաժողովը

տատեսխնուլոգիական կենտրոնի տնօրեն Սահակ Գապարյանը նշեց. «Մեր Կենտրոնն այս գիտաժողովի կազմակերպիչներից է: 2022 թ. Կենտրոնի և Ձեռնարկ անվան օրգանական քիմիայի ինստիտուտի միջև համագործակցության համաձայնագիր է կնքվել գիտահետազոտական գործունեության, ինչպես նաև գիտական միջոցառումների՝ գիտաժողովների, սեմինարների կազմակերպման նպատակով: Այս միջազգային գիտաժողովը տեղի է ունենում Հայաստանում այս համաձայնագրի շրջանակներում արդեն երկրորդ անգամ: Մենք կարևորում ենք նման գիտաժողովների անցկացումը, որոնք նպաստում են փորձի փոխանակմանը, գիտական արդյունքների քննարկմանը և միջավայր են ստեղծում երիտասարդ գիտնականների արդյունավետ համագործակցության և գիտության հետագա բարգավաճման համար»:

Գիտաժողովի գաղափարի հեղինակ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս, Ն. Ձելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի Մետաղակոմպլեքս և մանոչափ կատալիզատորների լաբորատորիայի ղեկավար, Եվրոպայի ակադեմիայի անդամ Վալենտին Անանիկովն ասաց. «Հիշում եմ, երբ ասպիրանտ էի 1996 թվականին, խոսվում էր քիմիայում համակարգիչների ներմուծման մասին: Ունեցնում էի, որ համակարգիչները շուտով կփոխարինեն քիմիկոսներին՝ կատարելով նրանց աշխատանքը, սինթեզելով միացություններ, դեղեր և այլն: Ժամանակը ցույց տվեց, որ համակարգիչները հիմնական գործիք են, բայց չեն փոխարինել քիմիկոսներին:

Հիշում եմ ևս մեկ միտում: Դա գալիս էր մանոգիտության ու մանոտեսխնուլոգիայի ոլորտից, կարծես քիմիան ամբողջությամբ պիտի անցներ մանոտեսխնուլոգիայի ո-

լորտ: Դա շատ հետաքրքիր միտում էր, բայց քիմիկոսները, այնուամենայնիվ, մնացին: Հիմա էլ ասում են, որ արհեստական բանականությունը և մեքենայական ուսուցումը շուտով կփոխարինեն քիմիկոսներին: Սա ևս հրաշալի նոր միտում է, բայց վստահ եմ՝ ժամանակ անց դրանք կլինեն պարզապես արդյունավետ գործիք քիմիայի համար, սակայն քիմիան կմնա»:

Գիտաժողովի մասնակիցները հանդես եկան զեկուցումներով՝ նվիրված օրգանական սինթեզին, կատալի-



զին, բժշկական, գերմոլեկուլային, հետերոցիկլիկ քիմիային, նյութագիտությանը, քիմիայում, կենսաբանության և բժշկության մեջ ժամանակակից թվային տեխնոլոգիաներին:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեսխնուլոգիական կենտրոնը, Երևանի պետական համալսարանը և Ռուսաստանի ԳԱ Ն. Ձելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնը 15 տարեկան է

Ս/թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնը «Կենսատեսխնուլոգիայի զարգացման 15 տարի. նվաճումներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովով նշեց հիմնադրման 15-ամյակը:

Գիտաժողովին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Հարություն Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների և կենտրոնների տնօրեններ, «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնի արտասահմանյան գործընկեր կառույցների ներկայացուցիչներ: Հյուրերի թվում էին հայազգի անվանի գիտնականներ՝ Մենդելևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստանի միջազգային մրցանակի դափնեկիր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի Միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար Յուրի Յուրինինյանը և ՌԴ Սկոլկովի գիտության և տեխնոլոգիաների ինստիտուտի պրոֆեսոր, «VYZOV» մրցանակի գիտական կոմիտեի նախագահ Արտեմ Օհանովը:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ով երկար տարիներ ղեկավարել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնը: Նա նշեց, որ կենտրոնը ստեղծվել է 2 ռազմավարական նշանակության կառույցների հենքի վրա, որոնք վերապրել են շատ դժվար ժամանակներ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, սակայն հաջողվել է պահպանել այդ կառույցները և դրանց միաձուլման արդյունքում ստեղծել ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնը: «Մենք մեր առջև դրեցինք խնդիր՝ աստիճանաբար



զարգացնել կիրառական գիտությունը: Եվ դա ստացվեց: Այսօր մենք ունենք տարատեսակ արտադրություններ, համագործակցում ենք եվրոպական ընկերությունների հետ: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել կենտրոնի անձնակազմին: Ձեր աշխատանքի շնորհիվ մեր կենտրոնը կա և շարունակելու է զարգացնել գիտությունն ու արտադրությունը», - ասաց Աշոտ Սաղյանը:

«Կենսատեսխնուլոգիան յուրահատուկ գիտություն է, որն ուղղված է մարդկության կյանքի տարբեր բնագավառների և շրջակա միջավայրի բարելավմանը: Միևնույն ժամանակ կենսատեսխնուլոգիան ցանկացած պետության տնտեսության նորարարական զարգացման առաջնային ուղղություններից է: Տարիներ շարունակ մեր կենտրոնի հիմնարար և կիրառական հետազոտությունները միտված են եղել հանրապետությունում կենսատեսխնուլոգիական արդյունաբերության խթանմանը: Այսօր էլ կենտրոնը հաջողությամբ շարունակում է իրականացնել իր առաքելությունը», - ասաց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն Ավետիս Ծատուրյանը:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը շեշտեց կենտրոնի կարևորությունը գիտության և պետության համար:

Շնորհավորական ուղերձներով հանդես եկան կենտրոնի գործընկերները: Այնուհետև տեղի ունեցան կենտրոնի երկարամյա աշխատակիցների և գործընկերների պարգևատրման արարողություն, կենտրոնի գործունեությունը լուսաբանող գրքի շնորհանդես, ցուցադրվեց կենտրոնի պատմությանը նվիրված ֆիլմ:

Ձեկուցումներով հանդես եկան Սկոլկովի գիտության և տեխնոլոգիայի ինստիտուտի պրոֆեսոր Արտեմ Օհանովը, Բուլղարիայի Գիտությունների ակադեմիայի Ստեֆան Անջելովի միկրոբիոլոգիայի ինստիտուտի պրոֆեսոր Սվետլա Դանովան, «Արմկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ղոկտոր Արթուր Համբարձումյանը և դոկտոր Սոնա Ավետիսյանը, Իտալիայի Կենսակառուցվածքների և կենսապատկերավորման ինստիտուտի պրոֆեսոր Ջովանի Ռոլիելլոն, Իտալիայի Քիմիական գիտությունների և տեխնոլոգիաների «Ջուլիո Նատտա» ինստիտուտի

դոկտոր Ալեսանդրո Գորին, Ռումինիայի Տիմիշոարայի պոլիտեխնիկական համալսարանի դոկտոր Անամարիա Տոդեան, Վրաստանի Փորձարարական և կլինիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ, «Գեոմեդի» համալսարանի պրոֆեսոր Վալենտինա Միտտովան:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեսխնուլոգիա» գիտաարտադրական կենտրոնը ստեղծվել է 2010 թվականին՝ Կենսատեսխնուլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի և Միկրոբիոլոգիայի և մանրէների ավանդադրման կենտրոնի միաձուլման արդյունքում:

Կենտրոնն իրականացնում է կենսաբանորեն ակտիվ նյութերի ստացման եղանակների և տեխնոլոգիաների մշակում, կենսատեսխնուլոգիայի ժամանակակից հիմնահարցերի ուսումնասիրություն, նոր գիտաարտադրական նշանակություն ունեցող հեռանկարային մանրէների ավանդադրում, բժշկության, դեղագործության, գյուղատնտեսության, սննդարդյունաբերության, երկրագիտության և բնապահպանության բնագավառներում կենսատեսխնուլոգիական խնդիրների լուծում, կենսաախբեկչության վտանգի կանխարգելմանը և վնասագործմանն ուղղված հիմնարար գիտահետազոտական աշխատանքներ, կենսատեսխնուլոգիայի բնագավառում կենսաբանորեն ակտիվ նյութերի արտադրության տեխնոլոգիաների մշակմանն ուղղված կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ: Կենտրոնում արտադրվում են դեղապատրաստուկներ, ոչ սպիտակուցային ամինաթթուներ, պարարտանյութեր, բուսայուղեր, տարբեր համային օշարակներ, «Նարինե» բուժիչ և կանխարգելիչ կաթնաթթվային մթերք: Կենտրոնի արտադրանքը նաև արտահանվում է եվրոպական երկրներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Ս/թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ Եվրամիության «Հորիզոն Եվրոպա» ծրագրի տեղեկատվական միջոցառումը, որը կազմակերպել էր Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնը (ԳՆԳԱԿ)՝ Եվրոպական հանձնաժողովի, ՀՀ ԳԱԱ-ի և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության հետ համագործակցությամբ:

Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ ԳԱԱ նախագահության, Եվրոպական միության ներկայացուցիչներ, «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շահառուներ, գիտնականներ, հետազոտողներ, ուսանողներ: Միջոցառումը վարեց Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնի տնօրեն Տիգրան Արզումանյանը:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրապետյանը: Նա նշեց, որ «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը մեծ հնարավորություն է հատկապես երիտասարդ գիտնականների համար՝ իրականացնելու համաշխարհային մակարդակի հետազոտություններ: Իր ելույթում Սարգիս Հայրապետյանը շեշտեց, որ գի-

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի տեղեկատվական միջոցառումը

տության զարգացման ռազմավարությունը հիմնված է ԵՄ փաստաթղթերի և Եվրոպական հետազոտական տարածքի առաջնահերթությունների վրա:

Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը կոչ արեց ակտիվորեն օգտվել ծրագրի հնարավորությունից, քանի որ այն ոչ միայն գիտության և նորարարության ծրագիր է, այլև մարդկանց միջև կապ ստեղծելու հարթակ: «Սա հենց այն գաղափարն է, որի վրա հիմնված է ծրագիրը՝ կապեր ստեղծել մարդկանց, հաս-



տատությունների միջև, համագործակցել և միասին կառուցել ապագան: Կարծում են՝ պետք է լինել համարձակ և ամբողջությամբ օգտագործել Հայաստանի գիտական ներուժը՝ ի նպաստ ինչպես երկրի, այնպես էլ մեր ընդհանուր գործընկերության: Հայաստանի նորարարական ներուժը ձեր ամենամեծ կարողությունն է: Օգտագործեք այն՝ համագործակցելով Եվրոպական գործընկերության հետ և

ստեղծելով մոր գաղափարներ», - ասաց ԵՄ դեսպանը:

Եվրոպական հանձնաժողովի Հետազոտությունների և նորարարությունների գլխավոր տնօրինության Եվրոպական հարևանության քաղաքականության թիմի ղեկավար Սիլվիա Բոժինովան Հայաստանի ճանապարհը «Հորիզոն Եվրոպա» ծրագրում անվանեց «հաջողության պատմություն»: «Դուք միացած եք աշխարհի ամենամեծ գիտահետազոտական և նորարարական ծրագրին՝ շուրջ 95 միլիարդ եվրո բյուջեով: Սա բացառիկ հնարավորություն է փորձի և գիտելիքների փոխանակման համար: Հայաստանը այս ծրագրին միացել է մեծ նախորդ շրջանում՝ 2016-2020 թթ. և արդեն այսօր ստացել է

ցանկանում են, որ հայ գիտնականները մնան Հայաստանում, բայց լինեն համատեղ ծրագրերի և գիտական ցանցերի մաս: Դուք Եվրոպական մեծ ընտանիքի մաս եք», - ասաց Սիլվիա Բոժինովան:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, թղթակից անդամ Արամ Պապոյանը ևս կոչ արեց ակտիվ դիմել «Հորիզոն Եվրոպա» ծրագրին և օգտվել այդ մեծ հնարավորությունից: «Ժամանակակից գիտությունը հնարավոր չէ իրականացնել մեկ երկրի սահմաններում: Մենք պետք է խթանենք գիտությունից դեպի նորարարություն և արդյունաբերություն անցումը, որը «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հիմնական սկզբունքներից է: Մեկ այլ կարևոր սկզբունք է միջգիտակարգային համագործակցությունը, ինչը ևս խրախուսվում է «Հորիզոն Եվրոպա» ծրագրով: Այս ամենը մեզ տալիս է մոր հնարավորություններ, հատկապես հիմա, երբ մեր երկրում իրականացվում են գիտության ոլորտի մեծ բարեփոխումներ», - ասաց Արամ Պապոյանը:

Միջոցառման ժամանակ ներկայացվեցին Հայաստանի մասնակցությամբ հաջողված նախագծերը, «Հորիզոն Եվրոպա» ծրագրին, Նորարարական Եվրոպա ենթածրագրին մասնակցության հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



«Մերձավոր Արևելքի աստղագիտական ժառանգությունը-2» (AHME-2) միջազգային գիտաժողովը

Ս/թ. հոկտեմբերի 6-ից-10-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Մերձավոր Արևելքի աստղագիտական ժառանգությունը-2» միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան ոլորտի լավագույն մասնագետներն Ավստրալիայից, Ավստրիայից, Եգիպտոսից, Թուրքիայից, Իսպանիայից, Իտալիայից, Իրանից, Հայաստանից, Հունգարիայից, Չինաստանից, Ռումինիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Տաջիկստանից: Ներկայացվեցին և քննարկվեցին թեմաներ՝ կապված Մերձավոր Արևելքի աստղագիտական ժառանգության, միջնադարյան, հնագույն աստղագիտության, Մետաքսի ճանապարհի երկայնքով աստղագիտական ժառանգության, էքոնաստղագիտության, բանախյուսության, պոեզիայի, փիլիսոփայության, արվեստի մեջ աստղագիտության, կրոնի և աստղագիտության, տիեզերական համաշխարհային ժառանգության, աստղագիտական կրթության հանրային իրազեկման հետ:

Գիտաժողովի շրջանակում Բյուրականի աստղադիտարանը հոկտեմբերի 8-ին Բյուրականում անցկացրեց «Գիտության և արվեստի փառատոն», որի նպատակն էր միավորել գիտությունը և արվեստը՝ ներկայացնելով գիտական ձեռքբերումներ, արվեստի բազմազան դրսևորումներ, ինչպես նաև երաժշտական ու մշակութային ծրագրեր: Միջոցառման ընթացքում կազմակերպվեցին ցուցահանդեսներ, գիտակրթական և մշակութային ներկայացումներ, համդիպում հայ մշակութային գործիչների հետ, ինչպես նաև մասնակիցներին աստղադիտման հնարավորություն ընձեռնվեց:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի, Միջազգային աստղագիտական միության Հարավարևմտյան և Կենտրոնական Ասիայի աստղագիտության զարգացման տարածաշրջանային գրասենյակի, Հայկական աստղագիտական ընկերության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, Արտաքին գործերի նախարարության (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնաժողովի) և ՀՀ ԳԱԱ կողմից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«Գիտության շաբաթ. Հայաստան 2025» փառատոն. այսպեղ բոլորը կարող են իրենց զգալ հեղափոխող

«Ձարգացնել գիտությամբ» կարգախոսով ս/թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը տեղի ունեցավ «Գիտության շաբաթ. Հայաստան 2025» փառատոնը: Փառատոնին, ի թիվս Հայաստանի առաջատար գիտակրթական կառույցների, մասնակցեցին ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի, Էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնները, Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի, Հնագիտության և ազգագրության, Մոլեկուլային կենսաբանության, Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի, Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի, Ֆիզիկական հետազոտությունների, Ա. Թախտաշյանի անվան բուսաբանության և Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտները:

Գիտության, տեխնոլոգիաների և ճարտարագիտության այս փառատոնը գիտելիքի տոն էր, որտեղ բոլորն իրենց զգում էին որպես հետազոտող: Փառատոնը նպատակ ուներ ոչ միայն հանրահռչակելու գիտությունը, այլև ստեղծելու մոտիվացիա երեխաների, դպրոցականների, երիտասարդների շրջանում՝ հետաքրքրվելու և զբաղվելու գիտությամբ:

Փառատոնի սիրտը Երևանի Ազատության հրապարակում էր, որտեղ տեղադրված էին գիտական կառույցների տաղավարները: Այստեղ գիտության սիրահարները և պարզապես գիտությամբ հետաքրքրվողները կարողացան բացահայտել գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության, գիտական ֆանտաստիկայի և արվեստի փոխկապակցված աշխարհը, իրականացնել գիտափորձեր, ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, քննարկել ամենամանավանական թվացող գաղափարները, ծանոթանալ նորագույն տեխնոլոգիաներին, նորովի բացահայտել իրենց շուրջն ապրող գիտնականներին: Իսկ ապակենտրոնացված միջոցառումներով մայրաքաղաքից և ՀՀ բոլոր մարզերից փառատոնին մասնակցեցին շուրջ 300 դպրոց և մանկապար-




տեղ՝ տեղում իրականացնելով տարբեր միջոցառումներ՝ գիտական փորձեր, խաղեր, նախագծեր, ցուցադրություններ:

Փառատոնի առաջին օրերը նվիրված էին գիտության և նորարարության գործնական կիրառման պատմություններին, գիտափորձերին, ցուցադրություններին: Հոկտեմբերի 2-3-ը մասնագիտական կողմնորոշման օրեր էին՝ համալսարանների, կրթական և նորարար կազմակերպությունների, գիտական ինստիտուտների, լաբորատորիաների մասնակցությամբ: Իսկ հոկտեմբերի 4-5-ը նվիրված էր գիտական ֆանտաստիկայի և արվեստի համադրությամբ՝ գրականություն, կինո, կոմիքսներ, խաղեր ու ֆուտուրիստական նախագծեր:

Նման փառատոնները գիտությունը դարձնում են էլ ավելի գրավիչ և հանրամատչելի, ամրապնդում են կապը գիտակրթական հաստատությունների և հասարակության միջև, արժևորում գիտության դերը:

«Գիտության շաբաթ. Հայաստան 2025» փառատոնը կազմակերպել էր «Գիտուժ» նախաձեռնությունը՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ: Գլխավոր հովանավորն էր YoHealth-ը, տեխնոլոգիական գործընկերը՝ Team Telecom Armenia-ն, ինովացիոն գործընկերը՝ Ամերիաբանկը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



ԸՇ ԳԱԱ-ում միջազգային գիտաժողովով նշանավորվեց Ավետիք Իսահակյանի 150-ամյակը

մունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: «Իսահակյանը համաշխարհային պոեզիայի զագաթներից է, նրա բոլոր գործերը համամարդկային գաղափարներ ունեն, հավիտենական նշանակության արժեք են: Մեր խնդիրն է էլ ավելի հանրահռչակել Իսահակյանի թողած վիթխարի ստեղծագործական ժառանգությունը, արժևորել այն և փոխանցել երիտասարդ սերնդին»,- ասաց ԶԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ԶԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Զեփքնազ Որսկանյանը նշեց, որ ինստիտուտի տեքստաբանության բաժնի կողմից հրատարակվում են Ավետիք Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի 14 հատորները: Այս տարի կտպագրվի Իսահակյանի «Հիշատակարանը»: Կազմվում են «Ուստա Կարո և Օրթե Զարուկ» անավարտ վեպի տարբերակները: Արդեն պատրաստ է և այս տարի տպագրվելու է վեպի երրորդ գիրքը: Հրատարակվում է Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրության երկրորդ հատորը:

«Ավետիք Իսահակյանի երկերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, և նրա ստեղծագործություններն արժանի տեղ են գրավել մաս համաշխարհային գրականության գանձարանում: Ժողովրդական ակունքներից եկող նրա երգը խոսում էր ժողովրդի սրտի հետ: Նրա ստեղծագործությունն արձագանքն էր դարաշրջանի հակասությունների: Նա ապրում էր Հայաստանի ճակատագրով, կերտում հոգեպես գեղեցիկ, դրական մարդու իդեալը, երազում կյանքի և բնության ներդաշնակության մասին, շոշափում համաշխարհային հնչեղություն ունեցող թեմաներ: Նրա ցավն ու ապրումները համամարդկային են, որ ծնվում են անսահման սիրուց դեպի մարդը, կյանքը, աշխարհը, հայրենիքը: Եվ այդ ամենը՝ մարդկային հոգին շոյող անմիջականությամբ, խոր հուզականությամբ, բյուրեղյա պարզությամբ»,- ասաց Զեփքնազ Որսկանյանը:



Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև հոկտեմբերի 25-ը

Երևանում և Գյումրիում: Գիտաժողովի շրջանակում ԶԳ և ՌԴ գիտական և կրթական կառույցների առաջատար մասնագետները, հետազոտողներն ու ուսանողները ավելի քան հինգ տասնյակ գիտական զեկուցումներով ներկայացրին Իսահակյանի գեղարվեստական ժառանգությունը հայ և համաշխարհային գրականության համատեքստում, նրա բնագավառական, հրապարակախոսական ժառանգությունը, մանականին և օրագրերը, հասարակական-քաղաքական գործունեությունը, գրական կապերն ու ազդեցությունները, ինչպես նաև Իսահակյան-արվեստ առնչությունները:

ԶԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

2025 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիրները


Ֆիզիկայի բնագավառում 2025 թվականի Նոբելյան մրցանակակիրներ են դարձել բրիտանացի Ջոն Բլաքը, ֆրանսիացի Միշել Դևերեյն և ամերիկացի Ջոն Մարտինիսը:

Գիտնականներն այս մրցանակին են արժանացել քվանտային մեխանիկայի բնագավառում կատարած հայտնագործությունների համար: «Հաճելի է տեսնել, որ մեկդարյա պատմություն ունեցող քվանտային մեխանիկան դեռ ի վիճակի է անակնկալներ մատուցել»,- ասել է ֆիզիկայի բնագավառում Նոբելյան կոմիտեի նախագահ Օլե Երիկսոնը:



Քիմիայի բնագավառում 2025 թվականի Նոբելյան մրցանակակիրներն են դարձել Սուսունու Կիտագավան (Ճապոնիա), Ռիչարդ Ռոբսոնը (Ավստրալիա) և Օմար Մ. Յագին (ԱՄՆ):

Նրանք այդ բարձր պարգևին են արժանացել մետաղաօրգանական շրջանակային կառուցվածքների մշակման համար: Ստեղծել են մեծ տարածություններով մոլեկուլային կառուցվածքներ, որոնց միջով կարող են անցնել գազեր և այլ քիմիական նյութեր:



Գրականության ասպարեզում 2025 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր է դարձել հունգարացի գրող Լասլո Կրասնահորկային: Մրցանակը շնորհվել է «նրա համոզիչ և խորաթափանց ստեղծագործության համար, որն ապոկալիպտիկ սարսափի պայմաններում վերստին հաստատում է արվեստի ուժը»,- ավելում է Նոբելյան կոմիտեի մամուլի հաղորդագրության մեջ:

Լասլո Կրասնահորկային էպիկական ստեղծագործությունների հեղինակ է, որոնք բնութագրվում են արտերգիզմով և չափից դուրս գրոտեսկով:



Ֆիզիոլոգիայի և բժշկագիտության բնագավառում 2025 թվականի Նոբելյան մրցանակը շնորհվել է ամերիկացի գիտնականներ Մերի Բրունկոուլին, Ֆրեդ Ռամսդենին և Ճապոնացի գիտնական Շիմոն Սակագուչին՝ պերիֆերիկ իմունային հանդուրժողականությանն առնչվող հայտնագործությունների համար:

Նրանք, ըստ Նոբելյան կոմիտեի, բացահայտել են՝ ինչպես է իմունային համակարգը վերահսկվում, հայտնաբերել են այն կարգավորող բջիջները, որոնք թույլ չեն տալիս մանրէներից պաշտպանող իմունային համակարգին վնասել օրգանները:



Տնտեսագիտության բնագավառում 2025 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են դարձել Ջոել Մոկիրը (ԱՄՆ), Ֆիլիպ Ագիոնը (ԱՄՆ) և Պիտեր Հոուիթը (Կանադա): Նրանք այդ մրցանակին են արժանացել նորարարությունների վրա հիմնված տնտեսական աճի բացատրության համար:

«Նրանց աշխատանքը ցույց է տալիս շարունակական աճի սպառնալիքներն ու դրանց հակազդելու միջոցները»,- հայտարարել է Շվեդիայի գիտությունների թագավորական ակադեմիան:



2025 թվականի խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է վենեսուելացի քաղաքական գործիչ Մարիա Կորինա Մաչադոյին:

Մրցանակը նրան շնորհվել է «ժողովրդավարության և վենեսուելացի ժողովրդի իրավունքների համար անխոնջ պայքարի, ինչպես նաև բռնապետությունից ժողովրդավարության արդար և խաղաղ անցման հասնելու իր նվիրվածության համար»,- հայտարարել է Նոբելյան կոմիտեն:





Հայ ականավոր կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Չուխաճյանի (1837-1898) «Գարուն» ռոմանսը հայկական ռոմանսի առաջին նմուշներից է։

Ռոմանսը գրվել է հայ մոր քնարերգության հիմնադիր Մկրտիչ Պեշիկաշյանի (1828-1868) համանուն քերթավածի հիման վրա։

Ռոմանսն առաջին անգամ հրատարակվել է Կ.Պոլսում՝ «Քնար հայկական» հանդեսի՝ 1862 թվականի 2-րդ համարում, և մեծ տարածում գտել։

Ցավոք, Պեշիկաշյանի բանաստեղծության ինքնագիրը չի պահպանվել, և հայտնի չէ ստեղծման ճշգրիտ տարեթիվը։ Առաջին անգամ այն տպագրվել է 1868 թվականին Սանկտ Պետերբուրգում՝ Միքայել Միանսարյանի խմբագրած «Քնար հայկական» երգարանում, ապա՝ 1870 թվականին Կ.Պոլսում՝ Ծերենցի խմբագրությամբ հրատարակված «Մատենագրութիւնք Մկրտիչ Պեշիկաշյանի» ժողովածուում։ 1904 թվականին «Գարուն» բանաստեղծությունը հրատարակվել է Փարիզում՝ Արշակ Չոպանյանի ծանոթագրություններով լույս տեսած «Մկրտիչ Պեշիկաշյանի քերթավածներն ու ճառերը» հատորում։ 1987 թվականին ՀԱՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակել է Պեշիկաշյանի երկերի լիակատար ժողովածուն, որտեղ տպագրվել է նաև «Գարունը»։

Փաստորեն Պեշիկաշյանի «Գարուն» բանաստեղծությունը հեղինակի կյանքի օրոք առաջին անգամ հրատարակվել է շնորհիվ Չուխաճյանի ռոմանսի՝ 1862 թվականի մայիսի 30-ին, ինչպես վերը նշվեց, «Քնար հայկական» հանդեսում, որի հեղինակներն էին Տիգրան Չուխաճյանն ու Գաբրիել Երանյանը։

Հայկական լեռնաշխարհի 6000-ամյա վիշապաքարերի մասին գիտնականների ուսումնասիրությունը լայն արձագանք է ստացել միջազգային ասպարեզում

Հայկական լեռնաշխարհի 6000 տարվա պատմություն ունեցող վիշապաքարերի վերաբերյալ Հայաստանի գիտնականների բացահայտումների մասին հոդվածը մեծ հետաքրքրություն է առաջացրել միջազգային ասպարեզում։ «6000-ամյա «վիշապաքարերի» առեղծվածը լուծվել է՝ հնագետները կապ են հաստատում «ջրի հնագույն պաշտամունքի» հետ»։ «Հնագիտության ոլորտում մեծ հայտնագործություն. 6000 տարվա վաղեմության «վիշապաքարերի» առեղծվածը «բացահայտվել է», «Հետազոտողները բացահայտել են Արարատ լեռան մոտ գտնվող Հայաստանի 6000 տարվա հնության վիշապաքարերի գաղտնիքը», «Վիշապ քարերը» անշուշտ ավելի հին են, քան բուրգերը. հնագետները բացահայտում են առեղծվածը», «Նոր ուսումնասիրությունը բացահայտում է Հայաստանի հնագույն վիշապաքարերի առեղծվածը», Մեզալիթյան «վիշապաքարերը» հավանաբար եղել են հնագույն ջրի պաշտամունքի մի մասը» վերնագրերով հոդվածներ են հրապարակել G.Britain news channel-ը, Daily Express-ը, The Jerusalem Post prepares-ը, National Geographic-ը, Greek Reporter-ը, Slate-ը, Archaeology News-ը, Archaeology Magazine-ը, Hayka-ն, ZAP.aeiou-ն, Nacion-ը, Derstandard-ը, Շeviri Haber-ը։

Այս հրապարակումների հիմքում Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի Կոստոլոզիայի և աստղաֆիզիկայի կենտրոնի ղեկավար պրոֆեսոր Վահագն Գուրգադյանի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն պատմական գիտությունների դոկտոր Արսեն Բոբոխյանի հեղինակային «Գուրգադյան Վ., Բոբոխյան Ա. 2025, Վիշապաքարերը որպես Հայկական լեռնաշխարհի պաշտամունքային նախապատմական հուշարձաններ. տվյալների վերլուծություն և մեկնություն» հոդվածն է, որը հրապարակվել է վերջերս ազդեցության բարձր գործակից ունեցող «Nature Partner Journals-Heritage Science» սկրպուլյան ամսագրում։ «Հողվածի հեղինակների առաջ քաշած տեսակետները թույլ են տալիս ոչ միայն մորթի արժևորել վիշապ քարակոթողների տեղն ու դերը, այլև նպաստում են միայն Հայկական լեռնաշխարհի սահմաններում արձանագրվող մշակութային այս ֆենոմենի համրափռչակմանը և միջազգային շրջանակներում մոնումենտալ քանդակագործության բացառիկ նմուշների հետ ծանոթացմանը»,- ասում է ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնակատար, թղթակից անդամ Պավել Ավետիսյանը։

Հողվածում հեղինակները հաստատել են վարկածը, որ վիշապաքարերը սերտորեն կապված են եղել ջրի հնագույն պաշտամունքի հետ, քանի որ հիմնականում տեղակայված են ջրի բարձրլեռնային աղբյուրների մոտ և գտնվում են նախապատմական ոռոգման համակարգերին կից։

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԻ «ԳԱՐՈՒՆ» ՌՈՄԱՆՍԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ «ՈՆ ԻՆՉ ԱՆՈՒՆ» ԽՄԲԵՐԳԻ

Հանդեսի սույն համարը բացվում է հենց «Գարուն» ռոմանսի նոտաներով։ Ռոմանսի առաջին կատարողն է եղել Տիգրան Չուխաճյանի «Արիֆ» օպերայի լիբրետոյի հեղինակ և գլխավոր հերոսի՝ Արիֆի դերերգի առաջին կատարող, հայ օպերային երգիչ, Վեներտիկի կոմսերվատորիայում բարձրագույն երաժշտական կրթություն ստացած արևմտահայ առաջին երգիչ, տեմոր Հովհաննես Աճեմյանը (1838-1905), որն ունեցել է «տեմորի զմայլելի ծայն ու բեմական ընդունակություն»։

Ինչպես գրում է Տիգրան Արփիարյանը Կ.Պոլսում հրատարակվող «Մասիս» հասարակական-քաղաքական և գրական շաբաթաթերթի՝ 1893 թվականի ապրիլի 10-ի համարում տպագրված «Մեր պատկերը. Մկրտիչ Պեշիկաշյան» հուշագրության մեջ. «Իրիկուն մը, Պեշիկաշյանի մահեն քանի մը տարի առաջ, ընթրիքի հրավեր կար բարեկամի մը տունը, ի Բանկալթի։ Բանաստեղծը խոնջ ու տկար, կանուխեն հասած էր ու պատուհանին մոտ ընկողմանած՝ կը դիտեր վերջալույսը, որ կես մութի մեջ թողած էր սրահը։ Ներս կը մտնե Աճեմյան ու չուզելով խռովել Պեշիկաշյանի խոկանքը, կ'անցնի դաշնակին առջև ու կ'սկսի մեղմիվ նվագել ու երգել Գարունը։

Չուխաճյան ինքն ալ շատ երիտասարդ այն ատեն, ամռան իրիկուն մը, ի դարձին Վոսփորե, նավակին մեջ՝ դեռատի արվեստագետի մը ու սիրող սրտի մը բոլոր ներշնչումով՝ հորինած էր եղանակն այդ երգին, երգ ու եղանակ՝ բանաստեղծին երգած առավոտյան հովի միջև անուշ, աղու և սրտագին, անոր թռչնոց երգին պես ու վտակին մրմունջին պես ակնակիտ ու հանդարտիկ։

Պեշիկաշյան կը ցնցվի, կը դարձունե աչքերը բնության հեռապատկերեն դեպի սրահին խորը, դաշնակին ու երգչին կը հառնե անշարժ, գրեթե ցնորակա՛ն երևույթով մը, ճակատը ձեռքին մեջ առած, իր հիվանդ կուրծքին բոլոր հեղուկ ու խռովյալ հոգվույն բոլոր վրդովումովը հետեւելով այն գործիքին ու ձայնին, որ կենդանություն կուտային իր երգին։ Մութը իջած էր արդեն սրահին մեջ, երբ վերջին վանդուկը կը թրթռա երիտասարդ արվեստագետին մատներում տակ, ու վերջին շեշտը կը մտնի իր շրթներում վրա։ Ու այդ մութին մեջ, ուր երկու բարեկամները դեռ չէին խոսած, կը լսվի բանաստեղծին զոս ձայնը։

- Զայնդ դալար...»։

Իր ծավալած բազմակողմանի գործունեությանը Աճեմյանը հայտնի է նաև որպես լեզվագետ (խալեբերնից բացի տիրապե-

տում էր ֆրանսերենին. թարգմանել է «Քամեկազարդ տիկինը»), երաժշտական քննադատ, եվրոպական ծայրագրության գիտակ, բեմարվեստին կատարելապես քաջատեղյակ արվեստագետ, ում բեմական գործունեությունն ընթացել է տիկնոջ՝ ճանաչված դերասանուհի Շազիկի հետ զուգահեռաբար։ Աճեմյանը բեմից հեռացել է բավական վաղ՝ 1880-ականներին և իր կյանքի վերջին տարիները նվիրել խմբագրական աշխատանքին, որպես երաժշտական ժամանակագիր (քրոնիկագիր)՝ աշխատակցել Կ.Պոլսի ֆրանսիական մամուլին, խմբագրել է Կ.Պոլսում լույս տեսնող «Phare du Bosphore» ֆրանսերեն թերթը, երաժշտագիտական հոդվածներով աշխատակցել Կ.Պոլսի հայկական և ֆրանսիական մամուլին։ Որպես երաժշտագետ-քննադատ նա առաջիններից է ըստ արժանվույն գնահատել Տ. Չուխաճյանի դերն ու նշանակությունը։

«Գարուն» ռոմանսը դարձել է հայկական ազգային սիրված ու տարածված երգերից մեկը, հնչել է ոչ միայն Կ.Պոլսում, այլև Ձմյուռնիայում, Թիֆլիսում, Բաքվում և այլուր։ Սակայն Չուխաճյանի մահից հետո «Գարուն» ռոմանսը, կոմպոզիտորի մյուս ստեղծագործությունների նման, մոռացության տրվեց։ Կոմպոզիտորի կամերային երկերի, այդ թվում՝ «Գարուն» ռոմանսի վերածնունդի ուղղությամբ կարևոր քայլ դարձավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների գիտական 7-րդ նստաշրջանի շրջանակներում (նստաշրջանը նվիրված էր Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին) 2012 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ միստերի դաիլիժնում մեր կողմից կազմակերպված «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունները» համերգը, որի ընթացքում գիտական աշխատանքով զբաղվող երգիչներն ու դաշնակահարները մեր խնդրանքով կատարեցին կոմպոզիտորի դաշնամուրային ստեղծագործություններն ու ռոմանսները։ Չուխաճյանի «Գարուն» ռոմանսը հնչեց արվեստագիտության թեկնածու, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատար, ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակի դափնեկիր, միջազգային մրցույթների դափնեկիր Գուրգեն Բակլյանի կատարմամբ։ Դաշնամուրի մոտ էր Մարգարիտ Սարգսյանը։

Ցավոք, այսօր «Գարուն» ռոմանսը դեռևս իր հաստատուն տեղը չի գտել հայ երգիչների երգացանկում։

Ուշագրավ է, որ «Գարուն» ռոմանսի մեղեդու հիման վրա Կոմիտասն ստեղծել է «Ոհ

ինչ անուշ» a cappella քառաձայն խմբերգը, որը հրատարակվել է Կոմիտասի երկերի ժողովածուի 4-րդ հատորում (էջ 76-78)։ Ինչպես նկատել է Ռոբերտ Աթաբեկը. «Մշակման առաջին փորձերը վերաբերում են անցյալ դարի (19-րդ դարի-Ա. Ա.) վերջին տարիներին, թերևս դեռ Չուխաճյանի կենդանության օրերին։ ... բնագրերի առատությունը վկայում է վաղուց այդ երգի նկատմամբ Կոմիտասի տածած համակրության մասին»։

Նկատենք, որ սա Կոմիտասի կողմից Չուխաճյանի երգերի բազմաձայնման միակ դեպքը չէ։ 1913 թվականին Կ.Պոլսում հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակների հանդեսների կապակցությամբ Կոմիտասն ստեղծել է «Ով մեծասքանչ» խմբերգը, որի հիմքում էլ Չուխաճյանի «Առ մայրենի լեզու» զովերգն է՝ կրկին տպագրված «Քնար հայկականի» 1862 թվականի նույն համարում։

Փաստորեն Կոմիտասը վերցրել է Չուխաճյանի «Գարուն» ռոմանսի մեղեդին և բազմաձայնել։ Ընդ որում մեղեդին զգալիորեն փոփոխել է։ Այլ խոսքով՝ մշակել։

Կոմիտասը փոխել է վերնագիրը, եթե Չուխաճյանը պահպանել է Պեշիկաշյանի բանաստեղծության «Գարուն» վերնագիրը, ապա Կոմիտասը որպես վերնագիր է վերցրել բանաստեղծության 1-ին տողը՝ «Ոհ ինչ անուշ»։

Ակնհայտ է, որ Կոմիտասը շատ է սիրել իր «Ոհ ինչ անուշ» խմբերգը և հաճախ կատարել է իր համերգների ընթացքում։ Այսպես, խմբերգը հնչել է 1912 թվականի ապրիլի 8-ին Կ.Պոլսի Փոթի Շանի ձմեռային թատրոնում «Պուսան» երգչախմբի կատարմամբ՝ Ազգային հիվանդանոցի օգտին տրված համերգի 2-րդ բաժնում՝ «Ոհ, ինչ անուշ և ինչպես զով» վերնագրով՝ հնգաձայն երկսեռ խմբի կատարմամբ։

Շնորհիվ Կոմիտասի խմբերգի՝ 1912 թվականի այդ համերգի ընթացքում Կ. Պոլսում համատեղ «հանդես եկան» պոլսեցիներ Մկրտիչ Պեշիկաշյանը, Տիգրան Չուխաճյանն ու այդ տարիներին Կ. Պոլսում ստեղծագործող Կոմիտասը...

Ցավալիորեն այս խմբերգը դուրս է մնացել հայ խմբավարների ուշադրությունից։ Ցանկալի կլիներ, որպեսզի այն շրջանառվեր, քանի որ Կոմիտասի խմբերգով երկրորդ կյանք ստացավ Չուխաճյանի ռոմանսն ու երրորդ կյանք՝ Պեշիկաշյանի բանաստեղծությունը։

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր

«Տեղահանություն և հիշողություն. Արցախի շարունակվող ճգնաժամը բանավոր պատմություններում» միջազգային գիտաժողովը

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մշակութային մարդաբանության բաժնի, կիրառական մարդաբանության գիտահետազոտական խմբի, «Հագրաբան» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնի և Ֆրանսիայի INALCO (Institut National des Langues et Civilisations Orientales) համալսարանի նախաձեռնությամբ հոկտեմբերի 16-ին՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի դաիլիժնում մեկնարկեց «Տեղահանություն և հիշողություն. Արցախի շարունակվող ճգնաժամը բանավոր պատմություններում» թեմայով եռօրյա գիտաժողովը։

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Առվարյանը և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Արսեն Բոբոխյանը, ովքեր կարևորեցին գիտաժողովի թեմատիկ ուղղվածությունը՝ որպես Արցախի վերջին իրադարձությունների գիտական վերլուծության և բանավոր պատմությունների պահպանման հարթակ։

Գիտաժողովի առաջին միստը վարեց ՀԱԻ Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության խմբի ղեկավար, պ.գ.դ., պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը, որի ընթացքում զեկույցներով հանդես եկան չորս բանախոսներ։

Առաջին զեկույցով՝ «Միջնադարյան աղբյուրների տեղեկությունները Առան, Աղվանք, Ռան, Խաչեն, Ղարաբաղ անունների, դրանց տեղադրության և իմաստի շուրջ» թեմայով, հանդես եկավ ՀՀ ԳԱԱ

ՀԱԻ գիտաշխատող, ազգագրագետ, պ.գ.թ. Հրանուշ Խառատյանը։

Հնագետ, արվեստագիտության դոկտոր, պ.գ.թ., Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտության բաժնի վարիչ Հակոբ Սիմոնյանը ներկայացրեց «Ծիծեռնավանքը պեղումների լույսի ներքո» թեմայով զեկույցը՝ անդրադառնալով 1997-2001 թթ. Արցախի Քաջաթղի շրջանում իր ղեկավարությամբ իրականացված հնագիտական ուսումնասիրությունների և պեղումների արդյունքներին։ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող, ազգագրագետ Լեռնիկ Հովհաննիսյանը հանդես եկավ «Արցախի հայ բնակչության բռնադատվող 18-րդ դարի վերջին-19-րդ դարի սկզբին տարածաշրջանում միգրացիոն գործընթացների համատեքստում» թեմայով զեկույցով։ Նիստը եզրափակեց Հայաստանի պատմության թանգարանի գիտական զոմվ փոխտնօրեն, պ.գ.թ. Նժդեհ Երանյանը, որը ներկայացրեց «Մշակութային ժառանգությունը որպես հավանաբանության դաշտ. Արցախի նախաքրիստոնեական մշակույթի օրինակը» թեմայով զեկույցը։

Նիստի ավարտին տեղի ունեցավ քննարկում, մասնակիցները հարցեր ուղղեցին զեկույցողներին և ներկայացրին դիտարկումներ։

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին հաջորդ երկու օրերին։ Խնդրո առարկա հարցերի շուրջ ընդհանուր առմամբ ներկայացվեցին ավելի քան 30 գիտական ուշագրավ զեկույցումներ։

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ակադեմիական գիտական հանդեսների առաջնեկը



Լրացավ 33 զԱԱ հայագիտական և հասարակագիտական հնագույն հրատարակության՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 85-ամյակը:

1940 թ. նոյեմբերին հրատարակվեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) առաջին գիտական հանդեսը՝ «Տեղեկագիր ՍՍՌԳ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի. սերիա. 1, Հասարակական գիտություններ»: Հանդեսն այդ խորագրով լույս է տեսել մինչև 1943 թ. ճերմալի, այնուհետև՝ 1944-1965 թթ. լույս է տեսել «ՀՍՄԿ ԳԱ տեղեկագիր. հասարակական գիտություններ» անվանումով, իսկ 1966 թ. վերանվանվել է «Լրաբեր հասարակական գիտությունների»:

85 տարիների ընթացքում հանդեսը հաջորդաբար խմբագրել են վաստակաշատ գիտնականներ Խ. Մոմջյանը, Մ. Ներսիսյանը, Յ. Օրբելին, Ա. Հովհաննիսյանը, Ծ. Աղայանը, Գ. Ստեփանյանը, Յ. Ասլանյանը, Գ. Աբովը, Յ. Ինճիկյանը, Վ. Միքայելյանը, Ա. Խառատյանը, Պ. Ավետիսյանը: 2025 թ. տարեկգրից հանդեսի գլխավոր խմբագիրն է Ա. Բորիսյանը:

Արժանահիշատակ է, որ հանդեսի գլխավոր խմբագրի պարտականությունները ժամանակին ստանձնել է նաև ակադեմիկոս Գիտնական Հովսեփ Օրբելին, ինչը հանդեսին վերապահված կարևորության վկայությունն է:

«Լրաբեր» իր հրատարակության վաղ շրջանից և այդուհետև աչքի է ընկնում հայրենական հայագիտության դասական և նշանավոր այլ ղեկավար աշխատանքներով: Նրա էջերում իրենց ունեմասիրություններով հանդես են եկել մեր հանրության մեջ լայն ճանաչման արժանացած Յ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Բ. Պրոտորովսկին և ուրիշներ: Առաջատար գիտնականների այս սերունդը աճեցնում և միաժամանակ մուտք էր ա-

պահովում հետազոտողների նորանոր շարքերի համար, որոնք պատվով ու նախանձախնդրությամբ կատարեցին և այսօր էլ շարունակում են իրականացնել իրենց հաջորդալությունը գիտության մեջ՝ «Լրաբերի» հյուրընկալությամբ:

Մինչև 1958 թ., երբ սապարեզ իջավ գույտ հայագիտական «Պատմաբանասիրական հանդեսը», «Լրաբերը» մնում էր իր տեսակի մեջ առաջին և միակ ակադեմիական հրատարակությունը: Վերջինիս ուղղության մեջ ընդգծվում է նրա ծրագրային խնդիրը՝ մշակել հայագիտական ու հասարակագիտական հիմնահարցերը, լուսաբանել հայոց պատմության, գրականագիտության, լեզվաբանության, արվեստագիտության, արևելագիտության, տնտեսագիտության և փիլիսոփայության առանցքային խնդիրները և տեսական (հիմնարար) հետազոտությունները համադրել գիտագործնական արդիական պահանջմունքներին՝ ընթանալով դրանց ձևավորման ու զարգացումների հունով:

Մշտապես հիմք ունենալով դասական հայագիտության ու հասարակագիտության ավանդույթները՝ «Լրաբերը» ներկայումս նույնպես հաջողությամբ է իրականացնում դրանց կապերի ու շարունակականության ամրացումը՝ չընկրկելով նորովի հարցադրումների առջև և մնալով մասնագիտական այն շրջանակներում, որտեղ ամփոփվում են գիտական լրագրության սահմանները: Հանդեսի կենսագրական ուղին բնութագրվում է գիտական հասունացած խնդիրների և հիմնահարցերի հետազոտության ընդարձակ շրջագծով, ընդամենի՝ ներառելով հայոց պատմության և մշակույթի բոլոր շրջանները՝ գիտականորեն համակարգված ժամանակագրությամբ, հայ և համաշխարհային պատմափիլիսոփայական մտքի դրսևորումների հետազոտությամբ, բանասիրական, արվեստագիտական և առհասարակ մշակութային լուսաբանումներով:

Գիտական պարբերականի ընթացքը, սակայն, չպետք է պատկերացնել իբրև միանշանակ, մշտապես հիացմունք ներշնչող միակար շարժում: Իրականում «Լրաբերը» ևս, որպես այդպիսին, ունեցել է տեղատվության անխուսափելի պահեր, գիտական հասունացած հիմնահարցերի նկատմամբ ժամանակավրեպ անտեսումներ, գիտության և քաղաքականության փոխհարաբերություններում հոգուտ վերջինի թելադրանքների՝ չհիմնավորված հակումներ, առանց որի, սակայն, հնարավոր չէ պատկերացնել գիտական որևէ հրատարակություն և այն էլ տասնամյակների իրարամերժ ընթացքի մեջ: Հարցեր են սրանք, որոնք այսօր էլ ծառացած են հանդեսի առջև: Եվ «Լրաբերը» հաղթահարել է և տակավին շարունակում է այս գործնանել մեր գիտության զարգացմանը հատուկ տոկունությամբ ու համառությամբ: Դրա շնորհիվ նրա էջերում ամեն մի սերունդ սեփական խոսքն է ասել ամփոփելի հրամայականների ճանաչման ու

արժևորման ասպարեզում: Ժամանակի հետ հանդեսի նյութերում և մասնավորապես գիտությունը բնութագրող բնագավառում հայտնվեցին մի շարք նոր թեմաներ, ինչպես հայ ժողովրդի կազմավորման, նրա կրոնական մշակույթի և եկեղեցու պատմության, ազգային-ազատագրական շարժումների պատմափիլիսոփայական մշակումները, Հայոց ցեղասպանության և դրա հետևանքների արդիական իմաստավորումները և այլն:

«Լրաբեր» ակադեմիական հրատարակությունների մեջ առաջինն էր, որ բազմակողմանի հիմնավորումներով մոտեցավ արցախյան հիմնահարցին՝ արժևորելով դրա նշանակությունը հայոց պետականության, ազգային-ազատագրական շարժումների, մշակույթի տարբեր բնագավառների պատմության մեջ: Այս խնդիրները հանդեսը լուսաբանել և մեկնաբանել է թուրք-ադրբեջանական պատմակեղծարարների ազդեցիկ նկրտումները մերկացնելու ուղղությամբ: Եվ թեք այսօր արցախյան հիմնահարցը առարկայական՝ ռազմաքաղաքական ոչ միանշանակ զարգացումների հետևանքով դառնում է առավել քան երբևէ արդիական, վերոհիշյալ հրատարակությունների, այդ թվում և «Լրաբերի» գիտական հետաքրքրություններին անխուսափելիորեն սպասում են շատ ավելի լայնախոհ և բազմակողմանի մշակումներ, որոնք կապ չպետք է ունենան գիտության վզին փաթաթված պարտադրանքների հետ: Սպասվում է նաև, որ Արցախյան տարածքները կլանելու իրողությունը ընդարմացած՝ պատմության վարժական կեղծարարները գործի կդնեն իրենց նստած գիտնոցի հավելյալ միջոցները, որոնց դիմակայելու խնդիրն առաջնահերթ կդառնա ոչ միայն «Լրաբերի», այլև մեր բոլոր գիտական հրատարակությունների համար:

Իր հարուստ կենսագրության ընթացքում և դարձյալ առաջինը ակադեմիական հանդեսների մեջ «Լրաբերը» գիտական հիմնավոր կապեր հաստատեց արտերկրի հայ և օտարազգի հայագետների հետ: Նա դարձավ հայագիտական յուրահատուկ կամուրջ՝ նրանց և հայրենական գիտության միջև: Այսօր, մասնավոր, դրան նպաստում է հանդեսի գիտակազմակերպչական ուղղվածությունը՝ ճանաչելու համրապետության և նրա սահմաններից դուրս շրջանառվող գիտական արժեքավոր միտքն ու մտահղացումները՝ դրանց ընդառաջելու գործելակերպով: Այս հետևողական գործելակերպը, ի դեպ, ամենայն եռանդով շարունակում են զարգացնել «Լրաբերի» խմբագրակազմն ու խմբագրական խորհուրդը՝ մեր օրերի գիտական առօրյայի անմախքնթաց բարդ և դժվարին ժամանակներում:

«Լրաբերի» տասնամյակների պատմության մեջ աչքի է զարնում գիտական լրագրության սկզբունքների մշակման ու իրականացման ավանդույթային գործընթացը: Այս իմաստով կուզենայի արժանի հատուցել նրա երջակահիշատակ և բազ-

մանյա խմբագիր, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի գործունեությանը՝ հանդեսի նյութերի շրջանառության, ժամրային հստակ կարգավորման և տեքստի ամբողջականության ասպարեզում: Դրա հիման վրա ներկայումս բարձրանում են հանդեսի գիտական ուղղվածությունը և դրան համապատասխան թեմատիկ ու հիմնահարցային դասակարգումների հիմնավորվածությունը:

Այսօր նույնպես «Լրաբեր» ի հայտ է բերում գիտական լրագրության ասպարեզում իր զգայուն և արագ կողմնորոշվելու հիանալի հատկությունները՝ ընդառաջելով նորություններին և սեփական ներդրումներն անելով նյութի մատուցման, մատենագիտական փաթեթավորման, գիտական հոդվածի կառուցվածքի հույժ մասնագիտական նրբություններում:

«Լրաբերի» և նրա հեղինակների գործունեության առանձին բնագավառն է արխիվային և փաստավավերագրական բազմաբովանդակ նյութի վերհանումն ու հրապարակումը: Դրա շնորհիվ մոռացությունից փրկվել և գիտական հասարակայնության սեփականությունն են դարձել դասական հայագիտության հանգուցային հարցերի, ինչպես նաև ականավոր ղեկներին անտիպ մնացած կամ թիչ լուսաբանված ուսումնասիրություններ, պատմական անձանց կենսագրությունն ու գործունեությունն ամբողջացնող արժեքավոր նյութեր և այլն: Դրանք նույնպես վկայում են, որ «Լրաբերի» գիտական նշանակությունը զնախատվում է նաև նրա բնագրային հրապարակումներով: Տասնյակ տարիների ընթացքում նրա հրապարակած աղբյուրագիտական ուշագրավ փաստաթղթերը, ինչպես և սկզբնաղբյուրի արժեք ունեցող հնագիտական նյութի գիտական իմաստավորումներն ու վավերացումները նրա էջերում ներկայացնում են իր ամբողջական նկարագրի հատկանշական կողմերը:

Շարունակ կարելի է խոսել «Լրաբերի» արժանապատիվ ընթացքի, գիտական այդ ինքնատիպ հանդեսի անցած ուղու և նրանում ամփոփված հայագիտական ու հասարակագիտական զարգացումների մասին: Կարելի է ասել նաև, որ նրա կենսագրության այդ ութ և կես տասնամյակը նշված զարգացումների մի ամբողջ դարաշրջանի յուրօրինակ ամփոփումն է, որին զուգահեռ և միաժամանակ, «Լրաբերը» շարունակում է իր ամենօրյա արդիական և բեղմնավոր աշխատանքը: Առանց պայմանականության կարելի է նկատել, որ «Լրաբերը» այն կենտրոնատեղին է, որտեղ հանդիպում են հայագետներն ու հասարակագետները: Կարող ենք արձանագրել, որ «Լրաբերը» հայրենական գիտության համար թանկ և երիտասարդությունը պահպանած այն հրատարակությունն է, որն այդ որակներին է հասել իր էջերում նոր սերունդների մշտական գիտական ներկայության շնորհիվ:

Ալբերտ ԽԱՌՏՅԱՆ
33 զԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի պոեզիան երաժշտական հոր կյանք սրացավ

2025 թվականի հոկտեմբերի 16-ին Հայաստանի կոմպոզիտորների միության դափնիում տեղի ունեցավ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ կոմպոզիտոր Սոֆա Ազնավուրյանի հեղինակային երեկոն, որը կազմակերպել էին 33 զԱԱ արվեստի ինստիտուտն ու Հայաստանի կոմպոզիտորների միությունը: Համերգի ծրագրում ընդգրկվել էին կոմպոզիտորի նորաստեղծ կամերային երեք ստեղծագործությունները, որոնք կատարվեցին առաջին անգամ:

Համերգն իր տեսակի մեջ բացառիկ էր, քանի որ Սոֆա Ազնավուրյանն իր «Տարվա եղանակներ» վոկալ շարքը (սուպրանոյի ու դաշնամուրի համար), «Սիրո աղոթք» ռոմանսը (տենորի ու դաշնամուրի համար) և «Ավել Մարիա»-ն (տենորի ու երգեհոնի համար) ստեղծել էր՝ ոգեշնչված 33 զԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, 33 զԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի պոեզիայով և թարգմանչական արվեստով: Նշենք, որ վաստակաշատ գիտնականի բանաստեղծություններն առաջին անգամ հրատարակվեցին 2023 թվականին «Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ)» ժողովածուում, որի մասին առաջին գրախոսականը լույս տեսավ հենց «Գիտություն» ամսաթերթի էջերում:

Համերգը սկսվեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտական



մանկավարժության ամբիոնի դասախոս, երաժշտագետ Մարգարիտա Բաղդասարյանի ներածական ընդգրկումն խոսքով: Նա էլ վարեց ողջ երեկոն:

Առաջինը հնչեց «Տարվա եղանակներ» վոկալ շարքը («Գարուն», «Ամառ», «Աշուն», «Ձմեռ»), որը կատարեց Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերային և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեդջուրի Ռոզա Հովսեփյանը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոմպոզիտորիայի պրոֆեսոր Սահենիկ Մաղաքյանի նվագակցությամբ: Շարքի հիմքում ընկած էին տարբեր տարիների՝ Արարատ Աղասյանի գրած անվերնագիր բանաստեղծությունները: Կոմպոզիտորը երգաշարը նվիրել է 33 զԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջա-

տար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարգարիտա Ռուսկյանին:

Այնուհետև Երևանի Կոմիտասի անվան պետական կոմպոզիտորիայի երրորդ կուրսի ուսանող Ազատ Հովհաննիսյանի կատարմամբ և Սահենիկ Մաղաքյանի նվագակցությամբ հնչեց «Սիրո աղոթք» ռոմանսը՝ գրված «Դու կանգնած ես իմ դիմաց» բանաստեղծության հիման վրա: Ի դեպ, այս բանաստեղծությամբ էլ եզրափակվում է Արարատ Աղասյանի հիշյալ ժողովածուի բանաստեղծական բաժինը:

Համերգը եզրափակվեց Սոֆա Ազնավուրյանի «Ավել Մարիա»-ով՝ գրված ծայրի և երգեհոնի համար, որը կատարեցին Ազատ Հովհաննիսյանն ու երգեհոնահար, կոմպոզիտոր, արվեստագիտության թեկնածու Հովհաննես Մանուկյանը: Այս ստեղծագործության հիմքում Աֆանասի Ֆետի «Ավել Մարիա» բանաստեղծության՝ Արարատ Աղասյանի թարգմանությունն է:

Այսպիսով, Սոֆա Ազնավուրյանի շնորհիվ Արարատ Աղասյանի պոեզիան նոր կյանք ստացավ՝ այս անգամ որպես երաժշտական ստեղծագործություն:

Վստահ ենք, որ հայ ժամանակակից կոմպոզիտորներն առաջիկայում երաժշտական մարմնավորում կտան Արարատ Աղասյանի արդեն գրված ու դեռ գրվելիք բանաստեղծություններին ու թարգմանություններին:

ԱՆՆԱ ԱՍՏՈՐՅԱՆ



Վերջերս լույս տեսած այս ծավալուն աշխատությունը 18-րդ դարի պոլսահայ ակնավաճառ Հովհաննես Թովմաճանյանի (1717-1806) ինքնակենսագրության հրատարակությունն է: Վերջինս 1733-1739 թթ. աշակերտելով Մխիթար Սեբաստացուն, դարձավ Սուրբ Ղազարի հոգևոր վարժարանի առաջին սերնդի աշակերտներից մեկը: Սակայն ճակատագիրը նրան ուղղորդեց վաճառականության աշխարհ, ուր նա հետզհետե դարձավ իր գործի՝ թանկարժեք քարերի առևտրի իր ժամանակի հմուտ գիտակներից մեկը:

Շուրջ երեսուն տարի տևած ճամփորությունների ընթացքում, իր մասնագիտության բերումով, նա հանդիպել է բարձրաստիճան իշխանավորների, շփվել տվյալ տարածաշրջանում բնակվող ժողովուրդների բարբերի ու կենցաղի հետ, ինչպես նաև խորացել այդ երկր-

Ուշագրավ նոր գիրք

Պատմության Տեր Յովհաննիս Թովմաճանյան, որ զամս երեսուն ի կեսնս իւր շրջեցաւ յԵրուսաղայ, յԱսիա, ի Հնդկս եւ յԱֆրիկէ, ի Հապեշտան: Աշխատասիրութեամբ Էլիզաբեթ Թաշիրեանի եւ Մերուժան Կարապետեանի, Երեւան-Լոռու-Ս. Ղազար, Վենետիկ, 2024, 787 էջ:

ների հայկական համայնքների կյանքի բազմաշերտ խնդիրների մեջ:

Սբ. Ղազարի միաբանության մատենադարանի թիվ 1688 ձեռագրի հեղինակ Հովհաննես Թովմաճանյանը, տուրք տալով ժամանակի եվրոպական ավանդույթին, իր երկը շարադրել է երրորդ դեմքով՝ դրանով իսկ դառնալով բացառիկ երևույթ հայ մեմուարային գրականության մեջ: Հովհաննես Թովմաճանյանի Պատմություն-Ուղեգրության ձեռագրի հրատարակության պատրաստումը, որ պատմաբաններ Էլիզաբեթ Թաշիրյանը և Մերուժան Կարապետյանը ձեռնարկել են 2000-ականների սկզբից, տևել է տարիներ: Հետևելով ձեռագրի աշխատության ներքին տրամաբանությանը, նրանց հետազոտությունները սկսվել են Սբ. Ղազարի Մխիթարյան մայրավանքի և Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրատներում ու դիվաններում: Այս աշխատանքներն ընդլայնվել են եվրոպական խոշորագույն մի քանի արխիվներում. Archivio di Stato di Venezia, Museo Correr (Venezia), Archivio segreto Vaticano, Archivio storico de Propaganda Fide, Bibliothéque nationale de France, Archives nationale de France, Նուբարյան գրադարան և այլն:

Հովհաննես Թովմաճանյանի «Պատմություն», միաժամանակ թանկարժեք քարերի վաճառականի թողած բացառիկ գրառում է, որ այս կամ այն կերպ լույս է սփռում **առ ու տուրի** մասնագիտական

գործունեության վրա: Բավական է հիշատակել մի քանի դրվագ, ուր բացահայտվում են վաճառականի կիրառած մասնագիտական հնարքները **«առ ու վաճառք»** բուն գործընթացի ժամանակ: Այդպիսի օրինակներ են թանկարժեք քարերով զարդարված խաչի անհաջող վաճառքը Բենեդիկտոս ԺԴ պապին (1749 թ.), 1750-ին Նեապոլի Maria Amalia թագուհուն մարգարտյա թանկարժեք ակամաքողների վաճառքի նկարագրությունը, 1769 թ. նոյեմբերին, Վերսալում Լյուդովիկոս 15-րդ արքային և Ֆրանսիայի վարչապետ, դուքս Շուեզուիլի «կարմիր եագուրի» անհաջող վաճառքի մանրամասն նկարագրությունը, Մադրասում Շահամիր Շահամիրյանից հազար ոսկով գնած «48 կրան պղնձի եագուր» մատանու: Հռոմում 8500 դուրոշով վաճառքը (1767 թ.), թրի ակնակուռ մարջանից պատյանի անհաջող վաճառքի պատմությունը Արքուտի կառավարիչ Մուհամմեդ Ալի խանին և հաջող վաճառքը Ֆրանսիական Արևելահնդկական ընկերության աշխատակից Henry Alexandre Delarche-ին (1767 թ.) և այլն:

Հովհաննես Թովմաճանյանի «Պատմություն» բազում դրվագներում ի հայտ են գալիս նաև նրա տեսական պատրաստվածությունը վաճառականական գործընթացներում՝ սկսած հանձնարարական մամակների ձեռքբերումից (ընդհուպ մինչև Եթովպիայի Մենթվալեթ թագուհու կողմից իրեն տրված դատարկ,

բայց կնքված թղթերը՝ ուզած հանձնարարական մամակը գրելու համար), մինչև իսկ անձնական շփումներում (օրինակ՝ նրա և Բենգալիայի նախկին կառավարիչ և Անգլիայի պառլամենտի անդամ Հենրի Վանսիդարթի, Մարիա Թերեզիայի կայսերական թանգարանի և զանապետարանի գլխավոր տնօրեն, բանկիր ու դիվանագետ, հնությունների ու դրամների հավաքիչ Joseph Angelo de France-ի հետ):


Հովհաննես Թովմաճանյանի «Պատմությունը» բացառիկ կարևորության տեղեկություններ է հաղորդում Կ.Պոլսում սուլթանական արքունիքի և Օսմանյան կայսրության ֆինանսական բուրգը 18-րդ դարի կեսերին կառավարող անձանց և բանկիրների կյանքի, գործունեության և վախճանի մասին:

«Պատմությունը» բացառիկ տեղեկություններ է պարունակում նաև 18-րդ դարում Կ.Պոլսի բնակչության էթնիկական և դավանական փոխհարաբերությունների, դրա կառավարման մեջ օսմանյան կառավարող Էլիտայի և եվրոպական դիվանագիտական շրջանակների ծավալած գործունեության մասին:

Հովհաննես Թովմաճանյանի «Պատմությունը» 18-րդ դարի վերջին քառորդում գրված հայ մատենագրական կարևորագույն հուշարձաններից է: Հրատարակությունն իր ուսումնասիրությամբ, ծանոթագրություններով, տասնյակ քարտեզներով, բառարանով ու ժամանակն արտացոլող պատկերներով մախատեսված է եվրոպա, Ասիա և Աֆրիկա մայրցամաքների պատմության և առևտրատնտեսական հարաբերությունների մասնագետների, ինչպես նաև ընթերցող հանրության համար:

համագրություն

Նոր աշխարհայայտ Կուր-Արաքսյան մշակույթի ավարտի և Միջին բրոնզեդարյան շրջանի սկզբի ուսումնասիրության արդյունքների մասին



Բելգիայում լույս է տեսել «Բաղայան Ռ., Պերելլո Բ. (խմբ.), Կուր-Արաքսյան ֆենոմենի ավարտը, Հարավային Կովկասում Վաղ բրոնզից Միջին բրոնզին անցման ժամանակագրական և մշակութային ասպեկտները, Արաքս III. Կովկասյան տարածաշրջանի և հարակից շրջանների հնագիտության ու պատմության ուսումնասիրություններ, Բրեյթլու, Տյորինհաուս 2024» թեմատիկ ժողովածուն: Այն արդյունք է 2021 թ. դեկտեմբերի 2-3-ը տեղի ունեցած հեռահար միջազգային գիտաժողովի, որին մասնակցեցին մասնագետներ Հայաստանից, Վրաստանից, Միացյալ Նահանգներից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Իսրայելից, Մավրիկիոսի Հանրապետությունից, Ավստրալիայից: Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (Ռուբեն Բաղայան) և Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Բերենդե Պերելլո) համատեղ ջանքերով՝ «Արևմտյան և Կենտրոնական Ասիայի հնագիտական հետազոտությունների ասոցիացիայի» հովանու ներքո:

Հայկական կողմի որոշ հետազոտություններ իրականացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության

բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորված «Հայկական լեռնաշխարհում վաղ պետական կազմավորումների ձևավորման մշակութային և ժամանակագրական ասպեկտները» և «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գիտական թեմաների շրջանակներում:

Ժողովածուն անդրադառնում է Կուր-Արաքսյան մշակույթի ավարտին և Միջին բրոնզեդարյան շրջանի սկզբին: Այս շրջանը, որն ընդգրկում է մ.թ.ա. մոտ 2600-2000 թթ., բնորոշվում է տարածաշրջանում հազարամյակներ շարունակ գոյություն ունեցած ավանդույթների աստիճանական ամփոփումով: Հետազոտողների նորարարական մոտեցումները տարածաշրջանի մի շարք հուշարձանների մշակութային պատկանելության ու ժամանակագրության ուսումնասիրությունների նկատմամբ հնարավորություն են տալիս առավել ճշգրիտ հասկանալու Վաղ և Միջին բրոնզեդարյան դարաշրջանների միջև տեղի ունեցած փոփոխություններն ու շարունակականությունը:

Հնագիտական հայտնագործությունները վկայում են նաև հին բնակավայրերի լքման պատճառների, հասարակության մեջ աճող անհավասարությունների մասին վկայող թաղման հարուստ համալիրների ձևավորման, ինչպես նաև ավելի շարժուն կենսակերպի անցման մասին, ինչը նույնպես քննվում է ժողովածուի հոդվածներում:

Ժողովածուն առաջին անգամ ներկայացնում է վերջերս պեղված հուշարձանների նյութեր, միջմասնագիտական տարատեսակ հետազոտությունների արդյունքներ, մասնավորապես տասնյակ նոր ռադիոածխածնային տարեթվեր:

Ժողովածուն հրատարակել և տարածում է Բելգիայի «Brepols» հունանիտար գիտությունների ոլորտի միջազգային ակադեմիական հրատարակչությունը, որը հատուկ շեշտադրում ունի պատմության, հնագիտության, արվեստի պատմության, լեզվի և գրականության վրա:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը խորացնում է համագործակցությունը մարզային բուհերի հետ

Ս/թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ հանդիպում մարզային բուհերի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ինստիտուտի կողմից շուրջ 100 ամուսն գիրք նվիրաբերվեց Շիրակի, Գավառի, Վանաձորի և Իջևանի պետական համալսարաններին, ինչպես նաև «Կաճառ» գիտական կենտրոնին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գոհար Իսկանդարյանը նշեց, որ մախաձեռնության նպատակն է նպաստել մարզային համալսարանների զարգացմանը, հաստատել նոր կապեր, իրականացնել համատեղ աշխատանքներ, ծրագրեր, կազմակերպել դասախոսություններ: «Այս աշխատանքը պետք է շարունակական լինի: Նմանատիպ համագործակցություն ունենք Երևանի պետական համալսարանի, Ռուս-Հայկական համալսարանի, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի, ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հետ: Եվ մեզ համար ռազմավարական քայլ է ընդլայնել այս համագործակցությունը՝ ընդգրկելով մարզային համալսարանները», - ասաց Գոհար Իսկանդարյանը:

Քննարկվեցին գիտական ոլորտում հետազոտականության խորացման հեռանկարները: Մարզային բուհերի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին ընդգծելով ակադեմիական ինստիտուտի հետ համագործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Կան պահեր, երբ մեկ դիպուկ նախադասությունը կարող է ավելին անել, քան երկարատև բանակցությունները: Երբ սուր միտքը դառնում է ավելի հզոր զենք, քան քաղաքական ճնշումը: Հայ ժողովրդի՝ 20-րդ դարի պատմության մեջ այդպիսի մի դրվագ է Արարատ լեռը Հայաստանի գիմանշանի վրա պատկերելու և դրան հետևած դիվանագիտական բախման պատմությունը, որի հանգուցալուծումը մինչ օրս հիացնում է պատմաբաններին: Սա պատմություն է ոչ միայն խորհրդանշիչ, այլև ազգային ինքնության անքակտելի իրավունքի մասին:

Հոգու քարտեզը՝ ընդդեմ քաղաքական սահմանների

1920-ականների սկիզբը հայ ժողովրդի համար ծանրագույն ժամանա-

Գեորգի Չիչերինի հանձարեղ պատրասխանը Թուրքիային Արարատի և հայկական պիմանշանի մասին

կաշրջան էր: Եղեռնի սարսափից և Առաջին համաշխարհային պատերազմից հետո նորաստեղծ խորհրդային Հայաստանը փորձում էր կառուցել իր ապագան: 1921 թվականի՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով գծված նոր սահմանները խոր վերք էին թողել ազգային գիտակցության վրա: Արարատը՝ հայության հոգևոր հենասյունը, մնացել էր սահմանից այն կողմ՝ Թուրքիայի տարածքում:

Հենց այս պայմաններում, երբ աշխարհագրական քարտեզն այլևս հոգուտ հայերի չէր, անհրաժեշտ էր ստեղծել նոր՝ հոգևոր և մշակութային քարտեզ: 1922 թվականին, երբ սկսվեց Հայկական ՀԱՅԴ-ի պետական զինանշանի ստեղծման աշխատանքը, այդ պատմական առաքելությունն իրենց վրա վերցրին երկու հանձար՝ նկարիչ Մարտիրոս Սարյանը և ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը:

Սարյանը որևէ երկրորդային չունեց: Զինանշանի սրտում պետք է լինեի Արարատը: Սա պարզապես նկարչի ընտրություն չէր, այլ սկզբունքային դիրքորոշում: Ի պատասխան այն հարցադրումների, թե ինչպես կարելի է պատկերել մի լեռ, որը ֆիզիկապես այլ երկրում է, Վարպետը տվել է իր հանրահայտ պատասխանը.

«Արարատը հայ ժողովրդի խորհրդանշն է: Որտեղ էլ որ հայը լինի, աշխարհի որ ծայրում էլ ապրի, նրա հա-

յացքը միշտ ուղղված է դեպի Արարատ: Ես՝ որպես հայ նկարիչ, չէի կարող այն չնկարել»:

Բողոք Անկարայից և Չիչերինի փառքն պատասխանը

Երբ զինանշանի նախագիծը հայտնի դարձավ, քեմալական Թուրքիան պաշտոնական բողոք ներկայացրեց: Թուրք դիվանագետները պնդում էին, որ սա թշնամական քայլ է և տարածքային հավակնության բացահայտ դրսևորում: «Ինչպե՞ս կարող է Հայաստանն իր զինանշանի վրա պատկերել մի լեռ, որը գտնվում է մեր տարածքում», - վրդովված հարցնում էին նրանք:

Հարցը հասավ Մոսկվա, որտեղ այն պետք է լուծեր ՀԱՅՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինը: Բարձրագույն ինտելեկտի և անթերի դիվանագիտական հմտությունների տեր այս պաշտոնյան բախվեց մի խնդրի, որը պահանջում էր ոչ ստանդարտ լուծում:

Հերթական բանակցությունների ժամանակ, երբ թուրքական կողմը կրկին բարձրացրեց իր պահանջը, Չիչերինը, առանց ծայրը բարձրացնելու, հանգիստ տոնով արտաբերեց մի նախադասություն, որը դարձավ դիվանագիտական սրամտության դասական օրինակ.

«Թուրքիայի դրոշի վրա պատկերված է կիսալուսին: Սակայն, որքանով մեզ հայտնի է, Լուսինը Թուրքիայի տա-

րածքը չէ»:

Մի պահ դաիլիճում լռություն տիրեց: Այս պարզ, բայց անսպասելի համեմատությունը մերկացրեց թուրքական փաստարկի ողջ անհեթեթությունը: Չիչերինը վերահաստատեց, որ ազգային խորհրդանիշները պատկանում են մշակութային և հոգևոր, ոչ թե աշխարհաքաղաքական տիրույթին:

Խորհրդանշի հաղթանակը

Այսպիսով, Արարատը մնաց Հայաստանի զինանշանի վրա՝ դառնալով ոչ միայն հայրենիքի կարոտի, այլև ազգային արժանապատվության հաղթանակի խորհրդանիշ: Այն զարդարեց խորհրդային Հայաստանի զինանշանը յոթանասուն տարի, իսկ անկախության վերականգնումից հետո հպարտորեն տեղ գտավ Հայաստանի Հանրապետության ներկայիս զինանշանի կենտրոնում:

Այս պատմությունը մեզ հիշեցնում է, որ ազգի իրական հարստությունը ոչ թե քառակուսի կրկնադրված է չափվում, այլ իր խորհրդանշների հզորությամբ: Եվ ինչպես գրել է մեծն Համո Սահյանը, Արարատը «մեր ծննդյան վկայականի քարե կնիքն է»: Այդ կնիքը ջնջել հնարավոր չէ, և քանի դեռ հայի հայացքն ուղղված է դեպի սարը, այն միշտ կմնա մերը՝ անկախ բոլոր սահմաններից ու քարտեզներից:

soread.me

17 սեպտեմբերի, 2025 թ.

Անտուան Մեյե. «Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ»



Անտուան Մեյեն (1866-1936) ֆրանսիացի ակադմիկոս լեզվաբան էր, հայագետ, Ֆրանսիայի և արտասահմանյան մի շարք ակադեմիաների անդամ (այդ թվում՝ նաև ՀԱՅՄ ԳԱ-ի): Նա հայ ժողովրդի նվիրյալ բարեկամներից էր: 1891 և 1903 թթ. այցելել է Հայաստան: Հայերենի ուսումնասիրությունը Ա. Մեյեի գիտական հետաքրքրությունների ամենակարևոր ուղղություններից էր: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և հաջորդած տարիներին նա բազմաթիվ հոգվածներ և ուղերձներ է գրել՝ դատապարտելով հայերի հանդեպ կատարվող ոճրագործությունները և մեծ տերությունների թողությունները:

Անտուան Մեյեն բազմաթիվ ուշագրավ մտքեր է արտահայտել Հայաստանի, հայերի և հայոց լեզվի մասին: Ընթերցողին ենք ներկայացնում դրանցից մեկը:

«Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ ավելի համառություն չի պահպանել իր սեփական լեզուն: Հենց մի քանի հայեր համախմբվում են իրենց գաղթած քաղաքում, նրանք հիմնում են տպարան և իրենց լեզվով թերթ տպագրում: Այնքան մեծ է քաղաքակրթական լեզվի կենսունակությունը:

Այն ժամանակ, երբ Ֆրանսիա ամուրը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ. այն ժամանակներում, երբ ֆրանսերենը դեռևս չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարևոր գրականությունը:

Այն ժամանակ, երբ կազմավորվել է հայ գրականությունը, ժամանակակից Եվրոպայի մեծ ազգերից ոչ մեկը դեռևս գոյություն չուներ. ոչ Ֆրանսիայի մասին խոսք կարող էր լինել, ոչ էլ Անգլիայի: Հայ ազգի գրական հեղինակություններն այնպիսի հնություն ունեն, որ շատ դարերով գերազանցում են Արևմտյան Եվրոպայի ազգերի մեծամասնության հեղինակություններին:

Որքան էլ հայերի դժբախտություններն անցած լինեն սովորական չափը, նրանք ապացուցել են, որ իրենց ուժն էլ է սովորական չափն անցնում, և դրանով նրանք ապացուցել

են, որ իրենք կոչված են հարատևելու, կոչված են բարձրանալու բազում դարերից ընկճված վիճակից: Հայերը շատ մեծ ազգ են, բայց շատ հին ազգ են, մենք դա գիտենք պատմությունից, հայերի իրավունքներն ունեցող ճշմարտությունից բացի այլ բանի կարիք չունի:

Դարեր շարունակվող արտագաղթը պետք է սպառեր ցեղը: Սակայն հայերը չեն դադարել իրենց երկրում հաստատակամորեն բնակվելուց տալով, այդպիսով, հզոր կենսունակության ապացույց:

Արտագաղթած հայերի գործունեության մասին կարող ենք դատել այն փաստից, որ նրանք Բյուզանդիային տվել են կայսրեր, և որ 19-րդ դարում Եգիպտոսի ամենանշանավոր նախարարը՝ Նուբար Փաշան, հայ էր:

Հայերն այնպես սիրալիր են ընդունում, որ մի փոքր ամաչում են... Որքան էլ ասեն, քիչ է, թե այստեղ որքան սրտաբաց են ընդունում ինձ... Չեն համարձակվում որևէ բան խնդրել, որովհետև ուզածս անմիջապես կատարում են: Որտեղ ուզեցի ընդունվել, ընդունվեցի: Մարդիկ, որոնց նմանները Ֆրանսիայում մի քայլ անգամ չէին անի ինձ համար, այցելության եկան հյուրանոցի խոցով սենյակս: Եվ այս բոլորը նրա համար, որ ես հայագետ եմ»:



Լեգենդար Նիկիտա Սիմոնյանին շնորհվել է հերոսի կոչում

Մոսկվայի «Սպարտակի» պատմության լավագույն ռեֆերկու, ակունքի նախկին գլխավոր մարզիչ և ՀԱՅՄ ֆուտբոլի աստղ Նիկիտա Պավելի (Պոդոսի) Սիմոնյանը, ով ներկայումս Ռուսաստանի ֆուտբոլային միության (ՌՖՄ) առաջին փոխնախագահն է, հոկտեմբերի 12-ին մեծ ծննդյան 99-ամյակը:

Այս նշանակալի տարեդարձի կապակցությամբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով մեր լեգենդար հայրենակցին շնորհվել է Ռուսաստանի Աշխատանքի հերոսի կոչում: Հրամանագրում նշվում է. «Պետության առջև ունեցած առանձնահատուկ ծառայությունների, հայրենական ֆուտբոլի զարգացման և մասսայականացման գործում ունեցած մեծ ավանդի համար Ռուսաստանի Դաշնության Աշխատանքի հերոսի կոչում շնորհել «Ռուսական ֆուտբոլային միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության (մարզական ֆեդերացիայի) առաջին փոխնախագահ Նիկիտա Պավլովիչ Սիմոնյանին»:

Նիկիտա Սիմոնյանը հանդես է եկել Մոսկվայի «Կռիլյա Սովետովի» և «Սպարտակի» կազմում: Նա դարձել է «կարմիր-սպիտակների» պատմության լավագույն ռեֆերկուն՝ դառնալով 160 գոլի հեղինակ, չորս անգամ հաղթել է ՀԱՅՄ առաջնությունում և երկու անգամ՝ ՀԱՅՄ գավաթը: 1956 թվականին ՀԱՅՄ հավաքականի կազմում դարձել է Մեյբուռնի Օլիմպիական խաղերի չեմպիոն:

Տարբեր տարիների Ն. Սիմոնյանը եղել է Մոսկվայի «Սպարտակ», Երևանի «Արարատ», Օդեսայի «Չեռնոմորեց» և ՀԱՅՄ հավաքականի գլխավոր մարզիչը: Նրա ղեկավարությամբ «Սպարտակը» երկու անգամ հաղթել է ՀԱՅՄ առաջնությունում: Հայկական սպորտի պատմության մեջ անջնջելի հետք է թողել Նիկիտա Սիմոնյանը: Երբ նա դարձավ «Արարատ» ֆուտբոլային թիմի գլխավոր մարզիչ, կարճ ժամանակ անց՝ 1973 թվականին, Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմն իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց ՀԱՅՄ գավաթը և դարձավ երկրի առաջնության չեմպիոն:

ArmSport.am, 12.10.2025



Գիտական վարկած. ատամների կորուստն այլևս չի պահանջի թանկարժեք իմպլանտներ

Գիտնականներն արդեն շատ մոտ են նրան, որ ատամների կորուստն այլևս ոչ ոքի չի անհանգստացնի, ինչպես հիմա: Ենթադրվում է, որ մոտ ապագայում ատամների կորուստն այլևս չի պահանջի թանկարժեք իմպլանտներ կամ անհարմար ատամնաբուժական պրոթեզներ:

Մարդու օրգանիզմը պարզապես կարող է բնական ճանապարհով փոխարինել կորցրած ատամները, ճիշտ այնպես, ինչպես, օրինակ շնածկների մոտ, որոնց ողջ կյանքի ընթացքում անընդհատ մոր ատամներ են աճում: Այս սցենարը շուտով կարող է իրականություն դառնալ, քանի որ ճապոնացի հետազոտողները մշակել են նորարարական դեղամիջոց, որն արթնացնում է կորցրած ատամները վերականգնելու՝ մարմնի թաքնված կարողությունը:

Այս հեղափոխական գաղափարի հիմքում ընկած է USAG-1 սպիտակուցի ակ-

տիվության ընկճումը: Հենց այս սպիտակուցն է սովորաբար արգելում ատամ առաջացնող բջիջների ակտիվությունը: Երբ այս սպիտակուցի ազդեցությունը դադարում է, դեմտալ ցողունային բջիջները վերականգնում են և սկսում ձևավորել նոր, լիովին ֆունկցիոնալ ատամներ: Լաբորատոր փորձերը մկների վրա արդեն ցույց են տվել հեղափոխական հաջողություններ: Կենդանիների մոտ աճել են ամբողջական, առողջ ատամներ, որոնք գործում են նույն կերպ, ինչ իրենց բնածին ատամները:

Այս բժշկական առաջխաղացումը կարող է արմատապես փոխել մեր վերաբերմունքը ատամնաբուժության նկատմամբ: Արհեստական փոխարինիչների՝ պսակների, կամուրջների կամ համվող պրոթեզների փոխարեն հիվանդները պարզապես կարող են սպասել, մինչև իրենց մարմինը կարտադրի նոր ատամներ:

Մարդկանց վրա կլինիկական փորձարկումները նախատեսվում են 2025 թվականի վերջերին: Եթե դրանք հաջողությամբ իրականացվեն, այս վերականգնողական թերապիան հույս կտա միլիոնավոր մարդկանց, ովքեր բախվում են ատամների կորստի խնդրին՝ հնարավորություն տալով նրանց ունենալ իսկական, բնական աճեցված ատամներ, որոնք կվերականգնեն և՛ գործառնությունը, և՛ ինքնավստահությունը:

168.am, 20 սեպտեմբերի, 2025

ՀԱՏԱԾՆԵՐ ՎՐԹԱՆԵԱ ՓԱՓԱՉԱՆԻ «ԸԱՐՈՍ ԵՐԳԵՐԻՅ»

Սիրում եմ ես կռիվը: Սիրում եմ կռվարարին, սիրում երկար և ամուր եղջյուրները դեմ տվող խոյին, ծվատող, պատառոտող հովազին, նույնիսկ ճանկատող, ճչացող կապիկին, բայց երբեք լուռումունջ արածող ոչխարին:

Սիրում եմ նրան, ով ազոհ է, անվարվեցող, ով ըմբոստ է և հոխորտ, ով խայթող է և բռնցքը երկաթի:

Սիրում եմ ես նրան, ով հոսանքի դեմ է լողում, հոսանքն ի վեր գնում՝ ջարդվելով ալիքների դեմ...

Եվ այդ պատճառով գարշում եմ, երբ լալիս ես՝ փոխանակ կատաղելու, կծկվում ես՝ փոխանակ լարվելու, ծալվում ես՝ փոխանակ ծալելու, և միշտ, զգվեցնելու չափ միշտ հառաչում՝ փոխանակ փոփոխելու...

Սիրում եմ ես աղմկողների, սիրում չարերի և կռվարարների, բայց երբեք վզերին օղ կողո ստրուկների և ձեռքի ափը միշտ պարզած մուրացիկների:

Սիրում եմ զգացումների ներշնչմամբ ամեն բան խեղդող հոխորտ առյուծների, բայց երբեք պարտավորությունների համար զգացումները խեղդող անարգ զեռունների:

Եվ այդ պատճառով գարշում եմ, երբ ծնունդ ես սիրող, մտքերդ կաշկանդում, ուղեղդ շրջանակավորում:



Եվ այդ պատճառով ատում եմ քեզ, երբ ամբոխային կարծիքների տակ թևերդ ես ծալում-գոցում և սիրտդ արյան տեղ երկյուղի ջրով միայն լցնում: Եղի՛ր համարձակ, արածո՛ղ նախիր, խլի՛ր, բայց մի՛ մուրա, գոռա՛, բայց մի՛ աղերսիր, զարկ, բայց մի՛ խոնարհվիր և ջարդի՛ր, փոշի դարձուր կապեր, պատվարներ, սահման ու շղթա...

1901 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵԳԱՆ-ը հայտարարում է «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականների խրախուսման մրցույթ»

Մրցույթի նպատակն է խրախուսել գիտության բոլոր բնագավառներում միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերում հոդվածների տպագրությունը, իրենց գործունեության ոլորտի առաջնակարգ ամսագրերում հոդվածների տպագրության մեջ առաջին կամ հիմնական ներդրում ունեցող երիտասարդ հեղինակներին, նպաստել ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:

Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներում և մասնագիտություններում և անցկացվում է չորս ենթաօրգրով:

Առաջին ենթաօրգրով նախատեսված է խրախուսական դրամաշնորհի տրամադրում երիտասարդ գիտնականներին՝ «Scimago Journal & Country Ranking (SJ R)»-ում 50 և ավելի ամսագրեր պարունակող որևէ կատեգորիայի՝ առաջին հինգ ամսագրերից որևէ մեկում տպագրության համար: Դրամաշնորհի չափը կազմում է 1.250.000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, եթե հայտատուն հանդիսանում է հոդվածի առաջին, վերջին կամ մասնակազմություն վարող հեղինակը (corresponding author), և հոդվածի ամսագիրը դասվում է SJ R Multidisciplinary կատեգորիայի առաջին հինգ ամսագրերի շարքին: 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, եթե հայտատուն հանդիսանում է հոդվածի առաջին, վերջին կամ մասնակազմություն վարող հեղինակը (corresponding author): 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, եթե հոդվածի համահեղինակ հայտատուն չի հանդիսանում հոդվածի առաջին, վերջին կամ մասնակազմություն վարող հեղինակ (corresponding author):

Երկրորդ ենթաօրգրով նախատեսվում է խրախուսական դրամաշնորհի տրամադրում երիտասարդ գիտնականներին՝ «Scimago Journal & Country Ranking (SJ R)»-ում Q1, Q2 կամ Q3 քառորդներից որևէ մեկում դասակարգված ամսագրում առաջին անգամ տպագրության համար:

Երրորդ ենթաօրգրով՝ խրախուսական դրամաշնորհի տրամադրում՝ հայագիտության և հումանիտար գիտությունների, հասարակական գիտությունների բնագավառներում (Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ցանկի 5-րդ և 6-րդ բաժիններում ընդգրկված մասնագիտություններում) «Scimago Journal & Country Ranking (SJ R)» պորտալի առնվազն Q3 քառորդում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածների տպագրության համար:

Չորրորդ ենթաօրգրով՝ խրախուսական դրամաշնորհի տրամադրում՝ «Scimago Journal & Country Ranking (SJ R)»-ում ըստ տվյալ կատեգորիայի ամսագրերի դասակարգման առաջին (Q1) քառորդի ամսագրերում առաջին կամ հիմնական հեղինակությամբ տպագրության համար (առաջին կամ համարժեք ներդրում ունեցող, վերջին կամ մասնակազմություն իրականացնող հեղինակ (corresponding author)):

Երկրորդ և երրորդ ենթաօրգրերի դեպքում դրամաշնորհի չափը հաշվարկվում է՝ համապատասխան գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի՝ ԳԳԱՑ (1) բաժնի, իսկ չորրորդ ենթաօրգրի դեպքում ԳԳԱՑ (2) բաժնի և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թ. 13 մայիսի N 747-Լ որոշմամբ սահմանված բազային աշխատավարձի (66.140 ՀՀ դրամ) դրույքաչափի արտադրյալի արժեքին համապատասխան ՀՀ դրամի չափով:

Մրցույթի մասնակից կարող է լինել այն անձը, ով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ կամ ռեզիդենտ, ում 36 տարին չպետք է լրացած լինի հայտերի ընդունման վերջնաժամկետի օրը: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով, երեսնամյա արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեսնամյա համար հավելյալ 1 տարով: Յուրաքանչյուր հայտատու մրցույթին կարող է ներկայացնել միայն մեկ հայտ՝ մեկ գիտական հոդվածով: Մրցույթին յուրաքանչյուր գիտական հոդված կարող է ներկայացվել մեկ անգամ: Հայտատուի կազմակերպությունը պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող, և այդ կազմակերպությունը պետք է նշված լինի տպագրված հոդվածում՝ որպես հեղինակի պատկանելության (affiliation) վայր:

Չորրորդ ենթաօրգրին ներկայացված գիտական հոդվածը պետք է տպագրված լինի Web of Science հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) ընդգրկված ամսագրում:

Մրցույթին դիմելու վերջնաժամկետը 2025 թ. նոյեմբերի 5-ն է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի փորձարարական կենդանաբանության և ձկնաբանության լաբորատորիաների վարիչների թափուր տեղերի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թ. N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է բնական գիտությունների մասնագիտություններում առնվազն վեց հրապարակում ՄԳՀ-ում,

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների մասնագիտություններում ՄԳՀ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն չորսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
բ) ինքնակենսագրություն,
գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
դ) լուսանկար (2 հատ),
ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,

թ) բնութագիր վերջին աշխատավայրից,

ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ անսովա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Պարույր Սևակի փողոց 7, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ՊՈԱԿ (գիտական քարտուղարին), հեռ. +374 091 36 92 92:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16 Դասիչ՝ 69268,

գրանցման վկայական՝ 448: Էլ. հասցեն՝ armine.pet21@mail.ru

Ստորագրված է տպագրության՝ 28.10.2025 թ. Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: